ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРЦАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիր
մարզի Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1,
Հեռախոս (0231) 6-00-25
Էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

25.12.2012թ.
թիվ 221

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի առաջին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2012թվականի դեկտեմբեր ամսվա ընդունած որոշումներն և արձակած կարգադրությունները:

Առդիր 10/տասն/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11798-12
«25» 12 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1, հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

4դեկեմբերի 2012թվականի N39-Ա

## «ԱՄՖ» ՍՊԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ «ԱԷՐՈԼԻՏ» ԲԸ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 17-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի հունիսի 6-ի N4 նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի՝ /բնակավայրի / պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N02-Ն որոշումն և «ԱՄՖ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ժիրայր Արաբյանի կողմից 2012թվականի դեկտեմբերի 4-ին ներկայացրած N12-313 գրությունն, որոշում եմ.

1.«ԱՄՖ» ՍՊԸ սեփականության իրավունքով պատկանող «Աէրոլիտ» ԲԸ մեխանիկական բազային տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ գյուղ Մերձավան Երևանյան խճուղի N 1/3:

2.Սույն որոշման 1/մեկ/ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի դեկտեմբերի 4
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1, հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

10 դեկտեմբերի 2012թվականի N 40-Ա

## «ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆ ՎՈՒԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԲԱՑԱՌՏԵ ՍԱԼԻԿՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 17-րդ կետերով,հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 6-ի նիստի N17 որոշման 2-րդ կետը, որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրեն Վոլոդյա Մարտիրոսյանի հետ, օրենքով սահմանված կարգով, 2012թվականի դեկտեմբերի 10-ի կնքել բազալտե սալիկների նվիրատվության պայմանագիր:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետին` ձևակերպել հաշվապահորեն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի դեկտեմբերի 10

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1, հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

10 դեկտեմբերի 2012թվականի N 41-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ և 21-րդ կետերով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 24-ի N13 հերթական նիստի N07-Ն որոշման N2 կետն, որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 24-ի N13 նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2012թվականի բյուջեն հաստատելու մասին» N07-Ն որոշմամբ հաստատված «Մասնագիտական ծառայություններ» հոդվածի մեջ կատարել հետևյալ վերաբաշխումն.

1) 01 բաժնի1-ին խմբի 1-ին դասի 4241 հոդվածով նախատեսվածից 200 000ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4237 հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի դեկտեմբերի10

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1, հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2012թվականի N 42-Ա

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով,41-րդ հոդվածի 2-րդ մասով,որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում անցկացնել ամանորյա միջոցառում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի դեկտեմբերի 18

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1, հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2012թվականի N 43-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1/07.1/4324-12 գրությունն, որոշում եմ.

1.2013թվականի փետրվարի 18-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության նախագահի հերթական ընտրություններին մասնակցող թեկնածուների քարոզչական պաստառները փակցնելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը `

1) Երևանյան խճուղու N15, N17, N53, N57, N59,N61,N63,N65բազմաբնակարան շենքերի պատերին՝ տրամադրված 3-4 քառակուսի մետր մակերեսների վրա:

2.Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2012թվականի դեկտեմբերի 21
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1, հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2012թվականի N 44-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մաս 17-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 01/07.1/4324-12 գրությունն, որոշում եմ.

1.2013թվականի փետրվարի 18-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության նախագահի հերթական ընտրություններին նախապատրաստման և անցկացման համար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում սահմանել ընտրական երկու տեղամասային կենտրոններ՝

1)առաջին ընտրական տեղամասային կենտրոն սահմանել մանկապարտեզի շենքը՝հասցեն Երևանյան խճուղի 2-րդ փողոց N3: Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանին.

2) երկրորդ ընտրական տեղամասային կենտրոն սահմանել մշակույթի տան շենքը՝ հասցեն Երիտասարդության փողոց N39: Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Վեմիր Խուրշուդյանին:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին:

3. Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքերը տիրապետողներին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի դեկտեմբերի 21

գ. Մերձավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

25դեկտեմբերի 2012թվականի N 16-Ա

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱԶ2107 ՄԱԿՆԻՇԻ 538 LL 01 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով,կարգադրում եմ.

1.Գյուղապետարանի ՎԱԶ2107 մակնիշի 538 LL 01 պետհամարանիշի ավտոմեքենայի շահագործման լիազորությունները , 2013թվականի բյուջետային տարվա համար , վերապահել համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին:

2.Մեքենայի շահագործման աշխատանքները կատարել անվճար հիմունքներով:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի դեկտեմբերի 25

գ. Մերձավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

21 դեկտեմբերի 2012թվականի N15-Ա

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ 13-ՐԴ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով , Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 24-ի N13 նիստի՝ «Համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N07-Ն որոշումը, կարգադրում եմ.

1.Յայաստանի Յանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2012թվականի բյուջետային տարվա պլանային առաջադրանքների կատարման համար /եկամտային և ծախսային մասերով/, գյուղապետարանի աշխատակազմի երեք աշխատակիցների վճարել 13-րդ աշխատավարձ /համաձայն հավելվածի/:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012 թվականի դեկտեմբերի 21

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2012թվականի դեկտեմբերի
21-ի N15-Ա կարգադրության

| հ/հ | Ազգանուն, անուն | Պաշտոնի անվանումը և ծածկագիրը | Գումարի չափը ՀՀ/դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Գրիգորյան Լևոն | Համայնքի ղեկավար | 160000 |
| 2 | Եսայան Արևհատ | Համայնքի ղեկավարի տեղակալ | 120000 |
| 3 | Գևորգյան Հրանտուհի | Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 128000 |
| | Ընդամենը | | 408000 |